բովով և շինեաց եկեղեցի փոքր, ուր և Թաքոյց զման կենարար փայտին, և անդ նահատակեցան ոմանք յաշակերտացն • և յԻ դարու յայտնեցաւ նշանն սուրբ և պատուեցաւ մեծահանդէս տօնիւ • ասի Թերևս փոխադրեալ էր խաչն Գ-ՐՈՒԼՈ 'ի վանս Դ-ՈՒՈՒՓՈՐ կոչեցեալ մերձ 'ի Կեչորը (145), զոր յիշատակէ Վարդան պատմիչ։ — Յայս կողմանս Թուի լինել և ՍԱՀԱՌՆ քաղաք՝ ուր եկն նախ սուրբ Եղիշէ առաքեալ, և մի յաշակերտաց իւրոց անդ նահատակեցաւ։

182 • Հարաւակողմն գաշտիս Աղուանից՝ ՔԷպէրլեն գաւառ ընկեր երկիր է ԳԱՐԳԱՐԱՑԻՈՑ, իսկ ստորին կողմն նորա Թուի ՏՐԻ գաւառ Ռ-ՈՒԲԻՈ 'ի սմա ընդ մէջ երկոցուն հզոր գետոցն՝ Կուրայ և Երասխայ, Թուի լինել քաղաքն միոյ մեծի ԲԵԼՈՒԿԱՄ կամ ՊԵՅԼԷԳԱՆ կոչեցեալոյ, զոր պաշարեալ Հուլաղու խանի էառ՝ կապարեայ ռըմբօք կործանեալ զպարիսպն • Լէնկեթիմուր վերստին նորոգեաց, այլ յետոյ դարձեալ խանգարեցաւ • անուանի են ջրանցքն զոր Թիմուր եհատ՝ ածելով յԵրասխայ ջուր 'ի քաղաքս, և կոչի Նահար-ի-Պէրլաս՝ յանուն աղգատոհմին Թիմուրայ։ Ոմանք յաջակողմն կամ 'ի հարաւակողմն Երասխայ 'ի Մուղան գաշտի կարծեն զքաղաքս։ Ի հարաւային արևելեան սպառուած գաւառիս ՔԷպէրլենայ և համարէն նահանգին Գարապաղու գետախառնուն են Երասխայ և Կուրայ, և յանկեան անդ խառնիրդոցն կայ Մ-ՈՂԱՆԸ գեօղ՝ յանուն անապատին մեծի։

183 • Մինչև ցայս վայր են սեփական սահմանք Հայոց Մեծաց • յայնկոյս Կուրայ և Երասխայ ունելով միայն զփայտակարանն աշխարհ կամ զԿաղբս, որոյ սահմանք և գաւառք ոչ ճանաչին քաջ, քանզի և ոչ միշտ ընդ ձեռամբ Թագաւորացն Հայոց նը-ւաճեալ կայր • և այսմ հակառակ՝ երբեմն և Աղուանիցն աշխարհ որ ընդ մէջ Կուրայ և Կովկասայ, և այն կողմն ևս Կովկասայ մինչև 'ի Կասպիական ծովն 'ի Պաքուայ ցԴարբանտ, հնազանդէր Հայոց, արտաքոյ հնգետասանիցն աշխարհաց նոցա։

Ե • ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳ

184 • Նահանգս այս սահմանի յարևմտից Կուր գետով և ՃԷւանշիր գաւառաւ, 'ի հիւսիսոյ Սըղնագ և Կախեթ նահանգաւք Վրաց, յարևելից Կովկաս լերամբք, 'ի հարաւոյ Շիրուանաւ • արևմտեան կողմն գաշտային է, արևելեանն լեռնավայր ստորոտք Կովկասու, միջակողմն երիզուտ և ցածագոյն լերամբք։ Գետք ոչ սակաւ իջանեն 'ի Կովկասայ 'ի Կուր, Էրէրլայ, ԷլՃիլէան, Դ-ՈՒՐԷՆԼՅ, Գարալայ, ԿԷՕՔ-ԼՅ, և այլն։ Բայց ջուրքն չեն բաւուք, այլ և ախտաբերք ամարանի • երկիրն բերէ թթենի շերամ որդոյ առատ յոյժ, ունի և արօտս շատ։ Ի հնումն գաւառ էր սա բուն Աղուանից ՀԱՔԻ կոչեցեալ, որոյ եպիսկոպոսք յիշին 'ի Զ դարէ, և իշխանք յԹ դարու, յետ որոյ Պարսք տիրացան, յորոց գամ մի կորզեցին Վիրք 'ի ձեռն սպարապետացն Զաքարեայ և Իւանեայ • այլ դարձեալ ընդ տերութեամբ Պարսից եկաց ցամն 1805, յորում Ռուսք հատին 'ի նոցանէ, և յետ 1820 ամին արկին իսպառ ընդ վարչութեամբ ռուս օրինաց։ Բնակիչքն ոգիք 100,000, աւելի կամ պակաս՝ Թաթարք և Պարսք են ազգաւ, և Հայք տասն կամ 15,000։ Ի ջրոս գաւառս բաժանի Շաքի, 'ի Նուխի, Խաչմազ, Քասալ և Արեշ։

185 • ՆՈՒԽԻ գաւառ 'ի հիւսիսակողմն արևելից կայ, և 'ի նմա էր ՀԱՔԻ քաղաք, Թերևս 'ի Շակաց շինեալ, 'ի ստորոտս Կովկասու • այժմու քաղաքն ՆՈՒԽԻ որ և իշխանանիստ է համարէն նահանգին, կայ 'ի նմին լեռնակողման 'ի բարձու 2875', շքեղապատեալ պարսիզաբ և սօսիազարդ ՃԵմելեօք • ունի բերդ ոչ ամուր և գղեակ Ճարտար արաբիկ դրուագաբ • վաՃառք և Ճարտարութիւն քաղաքիս է մեծագոյն։ Բն • 8,000։ — Ի ԽԱՉՄԱԶ գաւառի որ 'ի հարաւոյ Նուխեայ, 'ի ստորոտս լերանցն կան ԽաչԽաչ և Վարդաշէն աւան (յորում 100 երդ Հրեայ), և Արենիա և Վարդանը, հայկական անուամբք, նշանակք բնակութեան Հայոց և յայս կողմանս։ — ՔԱՊԱԼԱ կամ ՂԱՊԱԼԱ գաւառ յարևելեան հարաւային ծայր նահանգին կայ, և է ԿԱՊԱՂԱԿ գաւառ Աղուանից, որ և ԿԱՊԱՂԱԿԱՆ, որոյ եպիսկոպոս յիշի 'ի Ե դարէ • Քաղիէ գեօղ Թերևս ունիցի զանուն ԿԱՊԱՂԱԿ քաղաքի որ յիշի 'ի Վրաց պատմութեան յԺԲ դարու։ Ոմանք յանուն արաբացի Քէապիլ տոհմի կարծեն զանուն գաւառիս • նոյնպէս ասեն և զանուանէ ԱՐԷՀ կամ ԱՐԻՀԻՆ գաւառի՝ որ 'ի մէջ առաջնոցն կայ առ Կուրաւ • 'ի գեօղս սորա նշանակի և Էրմենի-պաղար • իսկ գլխաւորն Գ-ՈՐՈՊԱՂԼԸ-պաղար։

Զ • ՇԻՐՈՒԱՆ ՆԱՀԱՆԳ

186 • ՇՐՈՒԱՆ կամ ՇԻՐՈՒԱՆ նահանգ ընդարձակ է, 'ի մէջ ունելով զՇաքի • 'ի հարաւոյ զԿուր և զԵրասխ, յելից զԿասպիականն ծով և 'ի հիւսիսոյ զպարս Կովկաս լերանց • յորոց՝ 'ի հիւսիսային ծայր սահմանացն ամբառնայ Պ-ՈՊ-ՊՈՂ 11150' • այլ անուի և 'ի վայր ցսահմանս Պաքուայ՝ ցածնուն լերինքն • և գետք հզօրք իջանեն 'ի նոցանէ ՓԷՐ-Ս-ԱԽՈՐ, ՃԷՐան-ԿԷՎԷՂ և ՃԷՆԻ-ԼՅ կամ Ս-ՈՎԱԳԴ, որք 'ի ծովն կազբից Թափին • իսկ Ա-ՈՈ, Էյրէլայ, ԿԷրՊԷՆ 'ի Կուր խառնին։ — Հարաւային մասն նահանգիս ստորև խառնիրդոց Կուր-Երասխայ՝ ՓԱՑՏԱԿԱԲԱՆ աշխարհն էր Հայոց հանգերձ Պաքուաւ, որ այժմ յառանձին կողմնակալութիւն զատուցեալ է • իսկ լեռնակողմն բնակեալ էր 'ի ՇԻՐՈՒԱՆ ազգէ, զոր յիշէ խորենացի յաշխարհագրութեանն, և ըստ նորոյ պատմութեան Զամչեան՝ 'ի Սերուանայ յորդւոյ Սիսակայ Հայկազնոյ սերեալ և կոչեցեալ • հիւսիսակողմն և արևմտակողմն երկիր էր ԼԱՆԱՑ և ԾՕԳԻԻՑ կամ Ծ-ՈՒԳԷՆ-Ղ-ՈՒՈ, զորս յիշեն պատմիչք մեր առաջինք Մովսէս խորենացի և Եղիշէ և այլք, և զյետանոցն ասի լինել սերունդս Առանայ, որպէս Գարգարայիցքն որ յայս կոյս Կուրայ • էր Լփնաց առանձին Թագաւոր, մերթ նեղակակից Հայոց և մերթ Պարսից • քարոզեաց առ նոսա և Ս • Մեսրովպ, իբրև յաղգ մերձաւոր։ Յի-